# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 2

*/հայտերի բացման և գնահատման նիստ/*

**«Գյումրու ավտոբուս» ՓԲԸ -ի կարիքների համար «ԳԱՎՏՈ-ԳՀԾՁԲ-2026/2» ծածկագրով թղթային եղանակով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Ք. Գյումրի, Ղանդիլյան 5/4

29 հունիսի 2026թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Եգանյան
Հանձնաժողովի անդամ՝ Ռ. Ներսիսյան
Հանձնաժողովի անդամ՝ Ս. Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Պայքար Վալեսյան

**«ԳԱՎՏՈ-ԳՀԾՁԲ-2026/2»** ծածկագրով գնանշման հարցման՝թղթային եղանակով, գնային առաջարկների ներկայացման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

Ընդունել ի գիտություն, որ՝

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ավտոբուս» ՓԲԸ -ի կարիքների համար **պահնորդական ծառայությունների»** ձեռքբերման **«ԳԱՎՏՈ-ԳՀԾՁԲ-2026/2»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնային առաջարկ ներկայացնելու մասին հայտարարությունը և հրավերը **22.06.2026թ**-ին տեղադրվել է www.gnumner.am ինտերնետային կայքում:

1. **Հանձնաժողովի նիստի օրակարգը**

*/Հ. Եգանյան/*

1. Հաստատել հանձնաժողովի նիստի օրակարգը
2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները
3. Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին
4. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին
5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին
6. Մասնակցի /մասնակիցների/ առաջարկած գինը
7. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցի որոշման մասին
8. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին
9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.**

*/Հ. Եգանյան/*

| Մասնակցի | |
|---|---|
| Անվանումը | Հասցեն |
| <<Էլիտ Սեքյուրիթի>> ՍՊԸ | Ք.Արմավիր, Կոմիտասի փող. ա. 22, հեռ. +37493003775 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ – 3 դեմ – 0**

3. **Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին**

*/Հ. Եգանյան/*

- մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը կազմված են հրավերին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3 դեմ – 0

4. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

/Հ. Եգանյան/

-բացված բոլոր ծրարներում առկա են դիմում-հայտարարություն, գնի առաջարկ և հրավերով պահանջվող փաստաթղթերը: Փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերում առկա է ստորագրություն մասնակցի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3 դեմ – 0

5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

/Հ. Եգանյան/

- մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

6. Մասնակցի /մասնակիցների/ առաջարկած գինը

/Հ. Եգանյան/

դրամ

| | | <<Էլիտ Սեքյուրիթի>> ՍՊԸ | |
|---|---|---|---|
| Չափաբաժինների համարները | Ծառայության անվանումը | Գնային առաջարկ առանց ԱԱՀ-ի | Գնային առաջարկ ԱԱՀ-ով |
| 1. | Պահնորդական ծառայություններ | 2100000 | 2100000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3 դեմ – 0:

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ.

7. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցի որոշման մասին

/Հ. Եգանյան/

Գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց հաստատել Գնանշման հարցման ընթացակարգի մասնակցների հայտերի գնահատման արդյունքները:

| Հ/Հ | Մասնակիցը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| | | |
| 1 | <<Էլիտ Սեքյուրիթի>> ՍՊԸ | բավարար |

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ գները համեմատվում են առանց ԱԱՀ:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ **«ԳԱՎՏՈ-ԳՀԾՁԲ-2026/2»** ծածկագրով Գնանշման հարցման ընթացակարգի՝

1. թիվ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած և միաժամանակ ընտրված մասնակից հայտարարել՝ <<Էլիտ Սեքյուրիթի>> ՍՊԸ –ին:

Ընտրված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցել հրավերով նախատեսված նախահաշվային գները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3 դեմ – 0:

8. **Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին**

*/Հ. Եգանյան/*

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը.
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հետ կնքվի պայմանագիր, պայմանագրի որոշման մասին հայտարարության հրապարակումից հետո:
- Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10/տաս/ տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի 15/տասնհինգ/ տոկոսի չափով՝ տուժանքի ձևով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

9. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

*/Հ. Եգանյան/*

Հանձնաժողովը որոշեց գնանշման հարցման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 13:30-ին, Ք. Գյումրի, **Ղանդիլյան 5/4** հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0*

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անուն,ազգանուն և ստորագրությունները.**

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Եգանյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ. Ներսիսյան

Հանձնաժողովի անդամ՝ Ս. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Վալեսյան